



ԲԱԶՄՄԱՎԷՊ

ՕՐԱԳԻՐ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻԻ 15.

1857

ՕԳՈՍՏՈՍ 1.

քարոյական

ՃԵՆԱՑ ԽԵԼԱՑԻ ԱՌԱԾՆԵՐ¹

Շատ մարդկանց գլխաւոր պակասութիւնն է որ կ'ուզեն ուրիշներու վարդապետ ըլլալ, մինչդեռ իրենք հարկ է որ պարզ աշակերտութիւն գոհ ըլլան :

Կ'ուզես ուրիշի պակասութիւնները հռչակել. ու չես գիտեր թէ անով որչափ վիշտք և աղէտք կը պատրաստես քեզի :

Հանձարաւոր ու իմաստուն մարդիկը սիրել, և իրենց արժանաւոր ընդունելութիւնը չընել, զիրենք տունդ հրաւիրել և միանգամայն անոնց դէմ դուռը գոցել մըն է :

Դռանց ջանից և կրթութեան անկարելի է ամենէն հասարակ խաղն ալ սորվիլ. իսկ մարդիկ, առանց ինչ աշխատանաց՝ կ'ուզեն առաքինութեան մէջ կրթուիլ :

Տարակոյս չկայ որ մարդ ապրելու համար պարտական է ինքզինքը սնուցանել. բայց միայն մարմինը սնուցանելով գոհ պիտի չըլլայ. միտքն ալ պիտի ջանայ մշակել, որ իր անձին ամենէն գերազանց մասն է :

Կէկը միտքը կը ջանայ հրահանգել. և կը տեսնենք որ մեծ մարդկանց մէջ տեղ ունի. ուրիշ մը մարմինը սնուցանելէն զատ ուրիշ բան չմտածեր, և ռամկաց դասէն ոչ երբեք դուրս կ'ելլէ :

Ի՞նչ որ մարդիկ առաքինութիւնը փնտռեն, ապահով են որ կը գտնեն զայն. բայց աւելի կը սիրեն հարստութիւնք ու պատիւ փնտռել, որ ուրիշէ կախումն ունին, և զորոնք թերեւս ոչ երբեք պիտի կարենան ձեռք ձգել :

Դաքինութեան կռուոյն մէջ՝ պատերազմին սկզբան մի նայիր, այլ լմընալուն սպասէ : Կսիլը քիչ բան է,

¹ Տես երես 197 :

պէտք է գլուխ տանիլ : Այսպէս վար-
ձուորը որ ջրհոր մը կը փորէ , թէ որ
քանի մը կանգուն փորելէն ետքը ա-
ռանց ջուր գտնելու՝ կենայ դադրի , կոր-
սընցուցած կ'ըլլայ իրեն ժամանակն ու
աշխատանքը : Ինչպէս թէ աշխատած
չըլլար , իրեն գործքն ալ արժէք մը չու-
նենար :

Սողովուրդը օրէնքէն կը վախէ , բայց
առաքինութեան պատուէրքը կը սիրէ .
օրէնքը զանոնք կը նեղեն կը բռնադա-
տեն . առաքինութեան պատուէրքը դէպ
'ի իրենց կը ձգեն :

Հատ գովեստ խօսուեցաւ ան խրս-
տակրօն իմաստնոյն վրայ որ պնակ մը
բրինձ չէր ուզեր ուրիշէն , երբոր կը կաս-
կածէր թէ անիրաւութեամբ ստացած
էր զայն , և կը փախչէր ան տնէն որուն
տանտիրոջը վրայ համարմունք չունէր :
Բայց իր մայրը երեսի վրայ կը թողուր ,
ու ամենեւին պաշտօն մը յանձն չէր առ-
նուր , անպատիւ բան մը համարելով
իր հայրենակցացն ու հայրենեացը ծա-
ռայելը . այսպիսիները աղանդաւորք են
անպտուղ առաքինութեանց , և շատ
վար օգտակար առաքինութիւններէ :

Եւելի կը մեծարեմ այն մարդը որ
ամենեւին գիրք չկարդար , բան զայն որ
գրոց մէջ գտած ամէն բանին կը հաւ-
տայ :

Եւծ և իմաստուն մարդիկ՝ իրենց
գերեզմանին վէէն ալ՝ հարկաւոր և օգ-
տակար խրատներ կուտան ապագայից :
Իրաւ է որ իրենք մեռած են , բայց ի-
րենց դրուածքն և օրինակները անմահ
են , և անոնցմով եկող դարերուն ալ
վարդապետ պիտի ըլլան :

Երբոր մէկէն որ և իցէ կերպով նա-
խատուիս , մտածէ թէ քու կողմանէդ
բան մը ըրեր էս այդ արհամարհանաց
արժանի ըլլալու համար : Երբոր ան-
մեղութեանդ վրայ ապահով ես , ըն-
դունայն աղաղակները արհամարհէ ,
ինչպէս բանի տեղ չես դնէր տկար ու
վախկոտ շան մը հաջելը : Ինքն իսկ
Կոնստանդինոս և ուրիշ մեծ մարդիկ՝ ի-
րենց այսպանողքը ունեցան :

Որչափ մարդիկ անխոյժ են իրենց

արտը մշակելու , և կը յանդգնին դրակ-
ցին արտին վրայ աչք տնկել :

Ինաւ մի ըսեր . Ես պակասութիւնս
թեթեւ բան է , կրնամ անվնաս գործել
զայն : Ինաւ մի ըսեր . աս առաքինա-
կան գործս մեծ բան մը չէ , կրնամ
զանց ընել :

Յանցաւոր ես երբ յանդիմանութեց
արժանի կ'ըլլաս . բայց կրկին յանցա-
ւոր , երբ անոնց համբերելու չըլլաս :

Ով որ առանց մտածելու խոստմունք
կ'ընէ՝ շատ անգամ ստիպուած է իր
խոստմունքը չարահալելու , և անարժան
կ'ըլլայ ամենայն վստահութեան : Բայց
ամենեւին չվստահիս ան մարդուն որ մի
և նոյն գործողութեան վրայ թէ՛ հա-
կաւակ և թէ՛ 'ի նպատակ կը խօսի :

Իմընալու բան է մեղի հետ կենցա-
ղավարողները խաբել . բայց ալ աւելի
զգուշելի եղեւնական գործ է յաջորդե-
րուն ստելը :

Գեղ մը գողեր մտան , և միայն եր-
կու հոգւոյ կենաց խնայեցին , որոնց
մէկը կոյր էր , և մէկալը անդամալոյծ .
կոյրը անդամալոյծն առաւ ուսին վրայ
շալկեց , անդամալոյծը կուրին ցըցուց
ճամբան , և երկուքը մէկէն ապահով
տեղ մը գտան : Այսպէս մարդկային
կենաց դժբաղդութիւնքը կարծածնէս
աւելի կը թեթեւան , երբոր մարդիկ
մէկմէկու ձեռնտու ըլլան :

Երբոր մէկու մը վրայ չարախօսու-
թիւն կը լսեմ , կ'ըսէ բանաստեղծ մը ,
նոյն ցաւը կը զգամ ինչ որ սուր փշե-
րուն խայթուածը սրտիս կը պատճա-
ռեն . բայց երբոր աղէկ կը խօսին մէ-
կու մը վրայ , նոյն հաճոյքը կը զգամ ինչ
որ հօտաւէտ ծաղկի մը ամենաբաղցը
հոտը առնում :

Ինտանեաց հայր մը պէտք է որ աշ-
խատի պահելու իր ինչքն ու ստացուած-
քը . բայց աս խնամքը շատ մանրախոյզ
պիտի չըլլայ : Երկամանամ որ ինծմէ բան
կը գողցուի , ըսաւ տէր մը իր պարտիզ-
պանին , ինչ դարման կամ ճար ընելու է
աս բանիս առջևն առնելու : Պատաս-
խան տուաւ պարտիզպանը . Երբոր մէկ
ճար մը գիտեմ , պէտք է որ համարիս

Թէ քու եկամուտդ քիչ մը պակսեր է :
 Նաւասիկ , ըսաւ տէրը իր որդւոյն ,
 աղէկ դաս մը , ուսկից ամէն կալուածա-
 տեարք պէտք է որ օգուտ քաղեն :

Մուզէս յաջողութեամբ լմնցընել
 քու գործողութիւնքդ : Պէտք է ամէն
 բանէ առաջ միտքդ դնես որ դու ալ
 քիչ մը իրաւունքէդ ետ կենաս :

Կեանք ըսածդ ի՞նչ է : Բնուցած
 տարիներուս վրայէն անցնելով , միայն
 դատարկ ու ոչնչութիւն մը կը գտնեմ :
 Կարծեմ որ երազ մը տեսայ , որուն
 մէջ զանազան վիճակներ անցուցի , միշտ
 ընդունայն խորհրդոց ծփանօք ծփեցայ ,
 որ ծխոյ մը պէս անհետացան դացին :
 Դս աշխարհիս մէջ ուրիշ բան չեմ տես-
 ներ , բայց եթէ ընդարձակ ծով մը ու
 մեծ գետ մը . այսինքն մեր ցաւոց ծո-
 վը , որուն խորութիւնը անյատակ է :
 Սարգս դիւրաբեկ նաւակ մը մտած է ,
 միշտ ալբաթիս և հողմաբաթիս , և ամէն
 կողմէն ջուրը ներս կը մտնէ :

Սարգիկ կը գանգատին որ հանգիստ
 չունին : Դիւրաւ կրնային գտնել , բայց
 իրենց սիրտը անյարմար է անոր ճաշա-
 կը առնելու :

Երբոր մեծամեծ մարդկանց պատ-
 կերները կը տեսնեմ , կ'ըսէր իմաստուն
 մը , և կ'իմանամ որ յանցաւոր եմ պա-
 կասութեամբ մը , ոչ ինչ ընդհատ ամօթ
 կը զգամ , քան ինչ որ հասարակաց դի-
 մաց անուանարկ պատիժ մը կրած ըլ-
 լայի :

Օ՛վ որ կը սիրես՝ ամենեւին պակա-
 սութիւն չունի . Թէ որ մէկն ասելու
 ըլլաս , ամենեւին առաքինութի չունի :

Վիչ մարդիկ թոյնէ կը փնտսուին ,
 և սակայն ամէնքը կը սարսափին անկէ :
 Հեշտութեանց հաճոյքը անթիւ ան-
 համար մարդիկ կը սպաննեն , և մարդ
 չկայ որ անոնցմէ վախնայ :

Արոնք որ զիս կը գովեն , կը ցուցը-
 նեն ինծի որ ինչ ճամբայ պէտք է որ
 բռնեմ . անոնք որ զիս կը սրարօտեն՝
 դացած ճամբուս վտանգէն կը զգուշա-
 ցընեն :

Մենեւին խստիւ չփնտուես անոնց
 պակասութիւնքը որ երևելի հանձարով

մը կամ մեծամեծ առաքինութեամբք
 պերճացեր են : Դժամանդ մը վրան քա-
 նի մը պակասութիւն ալ ունենալովը՝
 միշտ յարգի է քան հասարակ քար մը ,
 որ աս պակասութիւններէն և ոչ մէկը
 ունենայ :

Բնուշ խստութեամբ մը ընտանեաց
 պակասութիւնները խրատելով՝ կրնայ
 անոր մէջ խաղաղութիւն պահուիլ : Եր
 մերձաւորաց պակասութիւնքը պատ-
 րուակելով , կրնայ անոնց հետը միաբան
 միաշունչ ապրիլ :

Մենամաքուր ջրին մէջ ձկունք չեն
 ըլլար . սաստիկ նրբամիտ մարդը՝ ընկե-
 րական վիճակի մէջ դիւրաւ չկրնար ա-
 պրիլ :

Սիայն մեծահանձար մարդիկ կըր-
 նան բանի բերել փոքրոգի մարդիկը .
 պէտք է որ շատ առաքինութիւն ունե-
 նայ մէկը որ քիչ առաքինութիւն ունե-
 ցողին հետ կարենայ ապրիլ :

Տարեց մարդկանցմէ մի պահանջեր
 հաճոյք մը կատարել , որն որ իրենց աշ-
 խատութիւն պիտի ըլլայ , և ոչ անստա-
 ցուած անձանցմէ ծառայութիւն մը՝ որ
 ծախք կը պահանջէ :

Մէն գործոց մէջ պէտք է որ իրա-
 ւունքը նախաթառ բազմի . բայց երբեմն
 կրնայ պատահիլ որ իրաւունք ունենաս ,
 և ուրիշները իրաւանցդ հակառակին :
 Թէ որ չնչին կամ թեթեւ բանի կամ
 շահու վրայ է ինդիրը , տեղիք տուր .
 իսկ Թէ որ կարևոր նիւթ մըն է , նայէ
 որ իմաստուն իրաւարարներ գտնես :

Թէ որ վստահ ըլլալով իրաւանցդ վը-
 րայ , ուզենաս յաղթել գոռողութեամբ ,
 բիրտ մարդիկ ոչ երբեք կը կրթուին ,
 յամառները ոչ երբեք քեզի իրաւունք
 կուտան , խորամանկները նոր նոր դա-
 րանք կը լարեն , դուն իսկ անձամբ կը
 հրաժարիս իրաւունքէդ , և աղէկ դա-
 տիդ գէշ դատի մը կերպարանք կու տաս :

Շատ անգամ ոտք մը երկրի մը վրայ
 վիճելով՝ տառը օրավար երկիր կ'արժէ
 դատաստանի համար հարկաւոր ծախ-
 քերով :

Կը շարունակուի :